



Էներգետիկայի զարգացումը գիտությանը համահունչ ներկայիս շուկայական հարաբերությունների ներքո

Ռուբեն Եղոյան

*«Էներգետիկայի գիտահետազոտական
ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն*

Նախ և առաջ ուզում եմ Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտի անունից շնորհակալություն հայտնել տվյալ միջոցառման կազմակերպիչներին և ողջունել բոլոր մասնակից կազմակերպությունների ներկայացուցիչներին, անհատներին և պարզապես հետաքրքրված մասնակիցներին՝ մաղթելով բոլորիս արդյունավետ և իմաստալից աշխատանք՝ հետագա հեռանկարային համագործակցության ակնկալիքով:

Մենք համոզված ենք, որ այս միջոցառումը շատ կարևոր դեր ունշանակություն ունի բոլոր մասնակիցների համար, սակայն այն նաև շատ խորհրդանշական է, հատկապես մեզ համար, քանի որ այս տարի «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն տոնում է իր հիմնադրման 70-ամյակը:

Ինստիտուտը, ունենալով երկարամյա պատմություն՝ սկսած ԽՍՀՄ տարիներին իր հիմնադրման պահից մինչ օրս, հաղթահարելով բոլոր բարդությունները և խոչընդոտներն իր երկարամյա գործունեության ընթացքում, կուտակելով գիտական, գործնական և գիտաարտադրական պոտենցիալ, անընդհատ զարգացնելով և փոխանցելով նվաճումները պարբերաբար ներգրավվող և տեղում պատրաստվող մասնագետներին, իր ուրույն տեղն է զբաղեցրել երկրի զարգացման համար անհրաժեշտ կարևորագույն ոլորտներից մեկում՝ Էներգետիկայում՝ անընդմեջ մասնակից լինելով վերջինիս խորքային խնդիրների բացահայտման և լուծման տարաբնույթ գործընթացներին:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ երկրի զարգացման և բարգավաճման, բնակչության բարեկեցության և սոցիալ-տնտեսական կարգավիճակի բարձրացման կարևորագույն խթաններից մեկն է հանդիսանում տվյալ երկրի տնտեսության շարունակական զարգացումը, որի ապահովման համար, միանշանակ, անհրաժեշտ է ունենալ, նախ և առաջ, հզոր, հուսալի և ինտենսիվ զարգացող էներգահամակարգ՝ պարբերաբար համալրվող ժամանակակից էներգախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով: Էներգետիկայի՝ նման զարգացումը կարելի է ապահովել միայն այն լուծումների և որոշումների հիման վրա, որոնց հիմքում ընկած է ոլորտային գիտությունը:

Հաշվի առնելով ներկայիս շուկայական հարաբերությունները և մի շարք պետական կազմակերպությունների ինքնաֆինանսավորման գործոնը՝ ներկայիս գիտությանը ներկայացվում են շատ ավելի խիստ, շուկայական հարաբերություններին համահունչ և, ինչը շատ կարևոր է, նաև կիրառական պահանջներ։ Սա ամեննին չի նշանակում, որ այս պայմաններում տեսական գիտությունը պետք է դնել մի կողմ և առաջնորդվել մոտավոր և տրիվիալ մոտեցումներով, այլ, հակառակը, անհրաժեշտ է մշակել և կիրառության մեջ դնել կիրառական գիտությունը՝ լիովին հիմնված գիտական ճշգրիտ մոտեցումների վրա, մասնակից դարձնելով ներկայիս գոյություն ունեցող բոլոր ժամանակակից տեսական և տեխնիկական միջոցները՝ համակարգային ճշգրիտ և լավագույն լուծումներ տալու համար։ Ակնհայտ է, որ սա բավականին բարդ խնդիր է։ Սակայն ինստիտուտին հաջողվեց պահպանել ԽՍՀՄ տարիներին ձևավորված և կուտակված գիտական ժառանգությունը և փոխակերպել ներկայիս շուկայական հարաբերությունների ներքո՝ ապահովելով բարձր գիտական պոտենցիալ և զբաղեցնելով իր ուրույն տեղը էներգահամակարգի զարգացման գործընթացներում։

Ընկերությունն ունի իր կարևորագույն դերակատարումը գրեթե բոլոր համակարգային խնդիրներում: Մասնավորապես, էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների մշակման, համակարգի օպտիմալ կառավարման, հեռանկարային զարգացման, էներգետիկ ռազմավարության մշակման, տարբեր ընկերությունների կողմից ներկայացվող ներդրումային ծրագրերի գիտատեխնիկական վերլուծության, նախագծական աշխատանքների իրականացման և փորձաքննության անցկացման, միջհամակարգային խնդիրների բացահայտման և լուծման, համակարգի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացների անցկացման և անվտանգության կարգի շնորհման և բազմաթիվ այլ էլեկտրաէներգետիկական խնդիրների լուծման գործընթացներում:

ԷԳՀԻ ՓԲԸ-ն, ունենալով իր հեղինակավոր դիրքը ՀՀ պետական և մասնավոր մասնագիտացված կազմակերպությունների շրջանակներում և հանդիսանալով ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գիտական կազմակերպություններից մեկը, ապահովում է վերջիններիս կողմից պարբերաբար ներկայացվող հարցադրումների, խնդիրների և ծրագրերի ժամանակին, պատշաճ և բարձր գիտական մակարդակով լուծումը և մշակումը, ինչպես նաև ունի իր կարևորագույն մասնակցությունը ՀՀ պետական շահերի շրջանակներում ՀՀ Էներգետիկ ռազմավարության մշակման աշխատանքներում:

Մեզ հետ համագործակցում են էլեկտրաէներգետիկական շուկայի հետևյալ մասնակիցները՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի Օպերատոր» ՓԲԸ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ: Մենք սերտ համագործակցում ենք ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ: Համագործակցում ենք և ունենք բազմաթիվ գործառույթներ մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ՝ USAID, ՄԱԿ-ի գրասեյակ (UNDP), ՄԱԳԱՏԵ, ՀՀ վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ և այլ: Ընկերությունը 2004թ-ից հանդիսանում է Սևծովյան երկրների հաղորդող համակարգերի պլանավորման աշխատանքային խմբի անդամ:

Երկարամյա անկողմնակալ գործունեության արդյունքում ինստիտուտը վաստակել է հեղինակավոր անուն, որն այսօր թույլ է տալիս մասնակցել էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր սուբյեկտների միջև ծագած վիճահարույց քննարկումներին, տալ արդարացի լուծում և ընդունվել վեճի մասնակիցների կողմից: Մեր որդեգրած պետականամետ ժողովրդանպաստ քաղաքականությունը թույլ է տալիս ինչ-որ չափով խթանել նաև ՀՀ սոցիալ-տնտեսական բնագավառը՝ վերահսկելով տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացվող ներդրումային ծրագրերի արդյունավետությունը և երկարաժամկետ ֆինանսական հետևանքները ՀՀ պետության կողմից ստանձնած պարտավորությունների ներքո:

Ամփոփելով զեկույցս՝ ուզում եմ մասնակից
կազմակերպությունների ներկայացուցիչներին կոչ
անել սերտ և արդյունավետ հեռանկարային համա-
գործակցության՝ ի նպաստ մեր պետության,
տնտեսության և էներգահամակարգի զարգացման: